



19. ԻԼԻՔԻ ՄՐՋԱՆ

Կեղի ախշիկ ու մամ մի, ուր խեր:

Էտ կնկան պառկի, մեռնի, ջուխտ մի ապրնջան կեղնի:

Էտ մարթ կ'ըսես. - Ուխտ էլնի ես մարթ չառնիմ, էտ ապրնջան վիմ ձեռնով օր եղավ, ես զենիկ առնիմ:

Կը դնա ուր ծոց, կինկի աշխարք, շուռ կուգա, խենք ապրնջան որ կնկա ձեռնով եղավ, զէտ պիտի առնի: Որ աշխարք կը պտտես մեկին նեղ է, մեկին լեն է՝ չառնի:

Օրերուց օր պապ կ'երթա օդեն. էտա ախշիկ ուր մամու ապրնջան կեցկա ուր ձեռ, կեղնի մեկ ուր ձեռնով, նա լեն է, նա նեղ:

Յիրիկուն պապ կիգա տուն, կըսես. - Ափո, էտ ապրնջան իմ ձեռնով է:

Կըսես. - Ես քըզի կ'առնիմ:

Կելի էտ ախշիկ կ'երթա մըտ օսկի թաքնըջին, կըսես.

- Ընծի օսկե թաքեն մի շինա, իմ պապ ընծի կառնես, ես չըմ առնի, սուքե ինծի դիր հինն:

Կիգա, ուրին էրկու քուրզիր կա:

Կըսես. - Ախշի, ես դոր օր երթամ, դու կիգաք խըտ ընծի, իմ պապ ընծի կառի, ես կ'երթամ կորիմ:

Կելի էտտեղեն էտ ախշիկ օսկի թաքնըջու փարեն կիտա, ինք ուր իրեք քուրզիր կ'էլին մտին էտ սնդուկ:

Կելի ախշիկ, կ'երթա մըտ դահվաջին:

Կըսես. - Էլի են սնդուկ շալկա, թալ Վանա ծովու էրեսին, արի առ զքու փարեն:

Ղահվաջին է՝ սնդուկ կթալն Վանա ծովու իրիսին, կը դառնա կիզա:
Կէրթա կէլի պալի մի տակ, նոքար մի ծի մի կը բերա ջրա, կէրթա
թակավորի տղին խոստովանանք կէնա:

Կըսե. - Սնդուկ մի տեսա էնա պալի տակ, չըղջըցա բերեր:

Թակավորի տղեն կիզա էտ պալի տակ, սնդուկ օրուն կէնե, կէրթա:

Էլավ էրկու աջալ քրարի ըսեց. - Գացեք էն օսկի սնդուկ բերեք դրեք
իմ սենյակ, իմ սենյակին լայեղ է:

Էտ թակավորի կնիկ հըմն օր կէլի ուր տղի սեղան կը պատրաստա
մըչ էտ սենյակին:

Ամեն օր էտ սեղնի հաց կը պակսի: Էտ իրեք ախշիկներ սնդկից
կէլնին ամեն քասից բրդուծ մի կ'ուտին, կերակուր կը պակսի:

Էտ թակավորի տղեն կիզա կըսե. - Սուլտան, իմ քասեք ընչի՞
պակաս կը բերեք դրեք մըչ իմ սենյակին, ընծի կամչցուցես, իմ
ընկերտանք կ'ուզան հաց կուտեն ու հաց պակաս է:

Թակավորի կնիկ կէրթա տուն, գանգատ կէնե:

Կըսե. - Իմ տղեն ինծմե գանգատ կէնե:

Թակավորի տղի կնիկ՝ Բոշի-բոթոշ կըսե. - Սնդկի միջին է, հաց
կուտե, հո՞րի հաց կը պակասի:

Թակավորի սուլտան կիզա կըսե. - Օղու, գիշեր պախկվի, էտ օսկի
սնդուկն է, կիզա կուտե:

Տղեն կէլնի փաթվի ճովե խսիլ, կայնի դռան հետև: Տեսավ օսկի
սնդկեն ձեն էկավ, բացվավ՝ հուրի մալաք մի սնդկեն էլավ, էմեն չամխեն
գդալ մի գատ առավ:

Թակավորի տղեն զախշիկ բռնեց, ըսեց. - Ինչու՞ դու ընծի շուտ
չըսիր, օր մեչ էտա սնդկին էր:

Ըսավ. - Հայ տղա, ես հախու չխոսացի, թե մըչ էսա սնդկին էր:

Թակավորի տղեն ըսավ. - Ես գիշերով քու հետև շուռ կիզենք, դու
ցերեկով ընկար մըր ձեռ:

Տղեն առավ զետ ախշիկ, պառկավ, սաքախտան էտ տղի աղռավներ
էկան, թի. - Եվրոպայու թակավոր քգի կը կանչե:

Ըսեց. - Հեյ Աստված, ես զէտա հուրի մալաք հըմալ թողնիմ էրթամ,
անոթի, ծարավ, սնդկի մեչ: Չարեն. - Ըսեց, - սուլթանից պըտի էղի. սուլ-
թան զէտ Հուրի-Մալաք պտի պահե սնդկի մեչ:

Ըսավ. - Թակավորի սուլթան, ես կէրթամ Եվրոպա: Ինչպես իմ սեղան
կը պատրաստե՞ր՝ հավալի պես պատրաստի, դիր իմ սենյակ. մըչ սնդկին
իրեք ախշիկ կան, կէլնին կուտին:

Տղեն էր՝ քնաց եվրոպա սինոթ կա: Թակավորի հարս կանա՛վ վըր
օտնեբուն, ըսավ. - Ձեռ օսկի սնդուկ պտի վառե:՝

- Հայիավար, էտ օսկի սնդուկ հորի՞ պտի վառե:՝

- Թակավորի հարսի հրաման է:

- Ընչո՞վ պտի վառե:

- Շան քաքով, օսկին շան քաքով կը հալվի:

Չորս հատ նոքար ճամբեց, էրկու բեռ շան քաք բերին, սենյակեն
շալկեցին, տարան դրին մըջ շան քաքին: Կրակ տվին շան քաքի օռուն, կը
վառե սնդուկ:

Սընդկի միջի ախչիկ ըսավ. - Ախչի, իմ պառեկն վառավ, էտ ի՞նչ է.
գմըզի էրեցեցին մըջ սնդկին:

Էլան ճրագկպոց էտ իրեք ախչիկ փախան կրակի միջեն:

Հուրի-Մալաք գնաց մտավ պառվի մի տուն:

Ըսեց. - Նանա, գնա թակավորի օսկի սնդուկ կը վառեն, գնա փարչե
մի բեր քզի, խեղճ ես:

Էտ պառավ գնաց օսկի ջրու, էտ ախչիկ ծեռ էտու ուր ջեբեր: Չորս
խատ ճան գտավ ուր ջեբ: Էտ պառվու էրկու տղա կեր. էրկու մեկին էտուր,
էրկու մեկին:

- Տղա, - ըսեց, - տարեք թակավորի օսկի սնդկի ջրու մեջ ներկեք,
օսկի ճան կէլնի ծըզի:

Ծժեր ներկին բերին զճաներ: Թակավորի տղի աղոավներ էկան
ըսին. - Անգչկլա քզի, քու տղեն էկավ եվրոպայու:

Էտ չորս դավազ, օր շան քաք ժողված, բերած հախու մեռան տե-
ղընցտեղ: Էն մեկ դավազ ըսեց. - Դու հորի՞ հախու կը մեռնեք, թակավորի
հարսի հրամանն էր՝ մենք կատարեցինք:

Մեկ երիտասարթ ըմ էկավ ըսեց. - Կնկա խոսք էր, դու հորի՞ կատա-
րեցիր: Թակավորի տղեն կիզա ծզի կը մորթե:

Էտ պառվու տան ախչիկ՝ Հուրի-Մալաք ըսավ. - Տղա, գացեք, թակա-
վորի դռան հառեճ ճան խաղեցեք: Թակավորի տղեն մոտցավ քաղքին:

Ըսավ. - Իմա՞լ էրթամ ճան թալիմ:

Ըսավ. - Ըսա, շուն շանորդի, իմ ճաներ թակավորի տղի սնդկի օսկի
ճաներն ին, իմ ճաներ չըն խառնվի քո ճանին:

Թակավորի տղեն փայթոնից վերուց ըսեց. - Հայ-հայ տղա, ի՞նչպես
օսկի սնդկի էրեցած է:

Ըսավ. - Թակավորի տղա, վոլա, օսկի սնդուկ շան քաքով վառած ա:

Տղեն մըջ ուր մտքին երկմտաւ, ըսաւ. - Հայ-հոյ, աղեկ գտա, աղեկ կորցուցի, էտ իմա՛լ էտ սնդուկ վառեցին:

Էկաւ մտաւ սենյակ, օր նա սնդուկ, նա հալ, նա բան, զմամն էկաւ, ըսաւ. - Օղուկ, հորի՞ չըզրուես:

Ըսաւ. - Իմ վարդաթ ընցուցիք, իմ սնդուկ վառիք, ի՞նչ զրուցիմ:

Էտ ախչիկ պառվու տնեն էլաւ գնաց ծառ մի: Էտ ախչիկ շավառեք զարկեր է մըջ ջրուն, էտ Բոշի-բոթոշ ուր մամ էկած ատտեղ իբրիխ ջուր կը լցին:

Ախչիկ ըսեց. - Իմ շառավիքն է:

Էտ մամն ու ախչիկ վըր ջրուն կը կռվին վըր ուրենց խորոտկութենին, էտ ախչիկա փոր տայաղ չէտար:

Ըսեց. - Մորքուր, հորի՞ կը կռվիք, էտ իմ շառավիքն է մըջ ջրուն:

Էտ Բոշի-բոթոշ ըսեց. - Ախչի, էջի տակ, բան ըսիմ:

Խաբին, զՀուրի-Մալաք ծառեն իջուցին:

Բռնեցին զՀուրի-Մալաք ու հայդե մըջ գետին, կորաւ:

Հուրի-Մալաք եղաւ նանա-նարգիզ մի, բուսաւ մըջ էտ ջրին: Էտ թակավորի տղեն իջաւ, էկաւ, ծին կը ջրա վըր էտ գետին: Աչքն ընկաւ էտ նանա-նարգիզ, քաղեց զարկեց ուր քլոխ: Առաւ գնաց տուն: Տեսաւ էդ Բոշի-բոթոշ օր ծաղիկ քաղուկ զարկուկ էր իրկան քլոխ, հիմցաւ:

Ըսաւ. - Պտի աշխարք գա իրար, էտ նանա-նարգիզ ուր գլխուց պտի քաշե, թալե դուռ:

Տղեն չքաշեց, ոջալ քբար մի ըսեց. - Ջանըմ, կնկա խոսք է, քաշե, թալ դուռ:

Էտ նանա-նարգիզ բուսաւ, եղաւ երկու բարդի ծառ, բուսաւ թակավորի դուռ:

Թակավորի տղեն ծեռ թալեց վըր էտ բարդի ծառերուն, հաց կուտե, կը նստի, կը քնի էտ բարդիներու մոտ:

Բոշի-բոթոշ էլաւ դրեց վըր ուր շավղներուն ըսեց. - Էտ բարդի ծառեր պտի կտրեք, էնեք ընծի օրորոց:

Թակավորի տղեն էկաւ, էդ երկու բարդի ծառ կտրուկ էր: Գնաց պատիմ հետե ըմալ էլաց, օղբաց վըր էդ բարդի ծառերուն: Չորս հատ նաջար եկած, օր էդ բարդի ծառ տաշե, էնե օրորոց:

Մեկ պառաւ մի էկաւ, շատ փառլանվոր տաշեղ մի տեսաւ, վերուց, ըսաւ. - Տանիմ էնիմ ընծի սանդր:

Էդ պառաւ Բոշի-բոթոշի բարդաստին է: Էն մեկ օր պառաւ կերթա ուր տուն, օր ավլուկ, թափուկ, սերսըփուկ:

Պառաւ կըսես. - Մարաման, տեր բարեբար Աստված, էտ ո՞ր կիգա ընծի խեր կէնն: Իմ տուն ըմլա կավլե, կը թափե, օր ես տեսնիմ, իմ աչիչ լուսու պես պտի պաշտպանեմ գետի:

Կըսես. - Դէսօր չըմ էրթա թակավորի տուն: Պիտի պաղտվիմ դռան հետև, տեսնամ ո՞ն է ըմալ կավլե, կը խորդե:

Էտիկ կիշկա, օր Դուրի-Մալաքն է. տաշղենիմ կը հանե թալե, կէղի Դուրի-Մալաք, կավլե, կը թափե:

Էտ պառաւ կը հասնի գետի կը բռնե, կըսես. - Դուրի-Մալաք, քու գլխուն, արևուն մեռնիմ, դու մացի իմ տուն, խզմաթ կէնիմ: Խզմաթ էրե, ես կէրթամ թակավորի տուն, խզմաթ կէնիմ:

Դիրիկուն է, պառաւ թակավորի տնեն կիգա:

Էտ Դուրի-Մալաք կըսես. - Մարե, մեր տունքի հետև ձե մի կիգա, էլի տես, էտ ինչ ձեն է:

Կէլի պառաւ դուս, կը դառնա, կիգա: Կըսես. - Լաո, թակավորի իլխիքն է, կը ցըվովիմ. էտ ի՞նչ բառադի բանի հետև կան կիգաս:

Կըսես. - Նանե, գնա ծի մի բե մենք պահիմք:

- Սևավոր դանջուդ, - կըսես, - մըզի պահող կա՞ որ: Օր փոծավ, թակավոր մզի կախարան կը հանն:

Պառաւ կէլի, կէրթա, ախչկե խոսք չ'կուտրե:

Թակավորի տղին կըսես. - Տղա, ծի մի տու, ես պահիմ:

Կըսես. - Նոքար, նոքար, գնա մեր թառի տակ ծոտոտ ծի մի կա, տուր պառվուն, թըխ տանի պահե:

Կէլի ծոտոտ բերգիր մի, պառաւ կը բերե, կկապե ուր տուն: Էտ Դուրի-Մալաք հիրիկուն զուր ձեռներ կը լվա կիտա ծին խմե, առավոտուն զուր օտներ կը լվա, կիտա ծին խմե. էտ է ծիու կերակուլ, նա հերթ, նա խոտ: Քառասունխինգ օր, ծին կէլնի մսեն կը թափի:

Օրերաց օր մի կըսես. - Նանե, էտ ինչ ձեն է՝ կիգա մըր տանիքի հետևեն:

Կըսես. - Լաո, թակավորի իլխիքն է, օր տված բուտ, կը ժողվիմ:

Կըսես. - Նանե, էլի գնա մեկ թակավորի դուռ, արի: Քըսա-մըսա չկա՞ գելո:

Ձմամ կը խաբե ճամբե: Կէլի ծիու անգաճ կը փըսքփըսա, կըսես. - Դառչին շենք օր շենքար, հետին շենք մը շենքի: Բոռա. «Ձիմ տեր կու-գեմ, զիմ տիրոջ»:

Էտ թառի տկի էնպես ծին էնպես դլավցեր է, օր չուրս ուլատ կը թալիմ, նոր կը կապիմ՝ չզավթվի:

Ձին շեմք օր շեմավ, պատավ, ըսավ. «Ես զիմ տերն կուզիմ, զիմ տիրոջ»:

Թակավորի տղեն ըսեց. - Դու, դու, հո՞րի չէլիս վեր, էլի:

- Պառավ, - ըսավ, - տերն ես իմ, տիրող լե դու ես զաթան, արի ծին հանե վեր:

Պառավն էկավ ըսավ. - Դա՛, դա՛ էլի վե:

Հահու, ծին անգաճ չէնա, կըսե. «Ես զիմ տեր կուզիմ, զիմ պահող»:

Թակավորի տղեն ըսավ. - Պառավ, վո՞ն է ծին տիրեր, հան դուս, քու տուն մարթ կա:

Պառավ մտավ տուն, ըսավ. - Հուրի-Մալաք, ծին պատեր է, չ'էլի. արի ծին հան դուս:

Հուրի-Մալաքն է՛ էկավ ըսավ. - Դա՛, դա՛, քու տեր բերախտ է, դու՞ լե բերախտ ես, էլի վեր:

Ձին թռավ, կանավ: Թակավորի տղի աչն օր առավ էտ ախչիկ, հեսօրն է մեռեր, թե վաղ, խելք գլխեն պատավ գետին:

Երկու հատ դավազ ըսին. - Ամոթ չէ՞, դու թակավորի տղա եղնիս, ախչիկն հապով պատիս գետին, էլի վեր:

Էլավ թակավորի տղեն գնաց: Քսան խատ ախչիկ ժողվեց հլու կը շարեն ուր տղին:

Թակավորի տղեն երկու հատ դավազ ճամբեց պառվու տուն, ախչիկ քերին:

Ըսավ. - Դաքո մը հըլու չափեք, լցեք էտ ախչկա գոգ:

Ամեկ ախչկան մատնոց մը կիտեր, Հուրի-Մալաքին դաքո մի կիտեր:

Պառվու ախչիկն է, ըսավ. - Իլիքի մրջան, սըռ, ես պապ ու մամ ենք: Իմ մամուն արպնջա մի կեր, իլիքի մրջան, սըռ, իմ մամ մեռավ, մնաց իմ պապ, իլիքի մրջան, սըռ:

Իմ պապ աշխարք պտտտեց,

Իլիքի մրջան, սըռ:

Էտ արպնջան մեկի ձեռնով չեղավ,

Իլիքի մրջան, սըռ:

Էղավ իմ ձեռնով, իլիքի մրջան, սըռ:

Ես եցկեցի իմ ձեռ, իլիքի մրջան, սըռ:

Իմ պապ էկավ, ընծի կառներ, իլիքի մրջան, սըռ:

Ես գացի օսկե թաքնեջու մոտ, ըսի՝ օսկե թաքնե մի շինա, իլիքի մրջան, սըռ:

Էլա գացի մըտ դավազ, իլիքի մրջան, սըռ:

Ես ու իմ քուր, իմ քուրգիրն ենք, իլիքի մրջան, սը՛ն:

Հազար դուրուշ տվի ֆոնչուն, իլիքի մրջան, սը՛ն:

Ընծի տարավ թալեց Վանա ծովու իրեսին, իլլքի մրջան, սը՛ն:

Գացի էլա պալի մը տակ, իլիքի մրջան, սը՛ն:

Նոքար էկավ ընծի տեսավ, իլիքի մրջան, սը՛ն:

Գնաց թակավորի տղին ըսավ, իլիքի մրջան, սը՛ն:

Էկավ ընծի վերցին տարան, սընդուկ դրին սենյակ, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղեն սնդուկ դրավ ուր սենյակ, իլիքի մրջան, սը՛ն:

Իմ հաց խլիսավ, իլիքի՝ մրջան, սը՛ն:

Էտ թակավորի տղի սենյակ հաց կը բերին, իլիքի մրջան, սը՛ն:

Օրերուց մի օր ես էլա թակավորի տղի քասից կերա, իլիքի մրջան, սը՛ն:

Բոշի-բոթոշ իմացավ, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղի կնիկ կըսե. - Էլեք, գացեք իմ տնեն, օռոսպիք,

Իմ տղին հըլու չը պիտի շարելու:

Տղեն ըսավ. - Պառվու տան ախչիկ, դու շարե, դու ըսե,

Մաիթ քու խոսքին առնող չկա, առեք:

Թակավորի տղի աղաավներ էկան եվրոպայու, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղեն ուր մամուն թամբիխ էրաց, իլիքի մրջան, սը՛ն:

Իմ սենյակ հացով պատրաստից, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղեն էլավ փաթավալ խսիլ, իլիքի մրջան, սը՛ն:

Զմըզի տեսավ մեչ սնդկին, իլիքի մրջան, սը՛ն:

Բոշի-բոթոշ դավազներուն գանգտավ, իլիքի մրջան, սը՛ն:

Սիաթ տսվերկու սնդուկ վառեցին, իլիքի մրջան, սը՛ն:

Ես, իմ քուր ու քուրգիր, իլիքի մրջան, սը՛ն:

Փախանք, գացինք, պառվու տուն, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղեն դարձավ ետ, իլիքի մրջան, սը՛ն:

Պառվուն ըսի. - Պանավ, գնա քի օսկի ջուր բե, իլիքի մրջան, սը՛ն:

Պառավ գնաց ճլորով ջուր բերեց, իլիքի մրջան, սը՛ն:

Զորս խատ ճան տվի պառվի ճժերուն, իլիքի մրջան, սը՛ն:

Ճժեր գացին օսկի սնդկի ջրի մեջ ճաներ ներկեցին, իլիքի մրջան, սը՛ն:

Տղեկներ ըսին. - Շու շանորդի, մենք մըր ճաներ թակավորի օսկի սնդկի ջրեն ենք ներկե, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղեն էկավ, իլիքի մրջան, սը՛ն:

Ես փախա, գացի էլա ծառ, իլիքի մրջան, սը՛ն:
Բոշի-բոթոշն ուր մամ էկան, իլիքի մրջան, սը՛ն:
Էկան վըր իմ շքին կռվան, իլիքի մրջան, սը՛ն:
Ընծի խաբին, ծառեն իջուցին, իլիքի մրջան, սը՛ն:
Իմ փոր տայաղ չէտուր, իլիքի մրջան, սը՛ն:
Իմ շուքն է գարկեր մըջ ջրին, իլիքի մրջան, սը՛ն:
Ընծի խաբին, ծառեն իջուցին, իլիքի մրջան, սը՛ն:
Ջարկին տվին ընծի մըջ ջրին, իլիքի մրջան, սը՛ն:
Ես էղա նանե-նարգիզ, իլիքի մրջան, սը՛ն:
Ես բուսա մըջ էն ջրուն, իլիքի մրջան, սը՛ն:
Թակավորի հարս էլավ ըսեց. - Սևավոր, էլի՛ գնա իմ տղեն զինաթմիշ

մէնե:

Ըսավ. - Թակավորի տղեն էկավ, ծին ջրեց, իլիքի մրջան, սը՛ն:
Թակավորի տղեն քակեց գէտ նանա-նարգիզ, իլիքի մրջան, սը՛ն:
Էկավ չուր թակավորի դուռ, իլիքի մրջան, սը՛ն:
Բոշի-բոթոշ ընծի տեսավ տղի գլոխ, իլիքի մրջան, սը՛ն:
Հիջավ քբարներուն ըսավ. - Ետ ծաղիկ պտի քաղեք թալեք, իլիքի
մրջան, սը՛ն:

Մեկ դալիկանլիմ՝ էն դեխեն էկավ, իլիքի մրջան, սը՛ն:
Ետ նանա-նարգիզ քաշեց, թալեց դուս, իլիքի մրջան, սը՛ն:
Էղավ էրկու բարդի ծառ, իլիքի մրջան, սը՛ն:
Չորս նաջար բերեց, իլիքի մրջան, սը՛ն:
Բերեց գէտ ծառ կտրեց, իլիքի մրջան, սը՛ն:
Մեկ պառավն էնդեխեն էկավ, իլիքի մրջան, սը՛ն:
Իմ սեյրին վըր տաշղին էր, իլիքի մրջան, սը՛ն:
Պառավ վերուց տարավ, իլիքի մրջան, սը՛ն:
Ետ պառավ թակավորի նոքարն էր, իլիքի մրջան, սը՛ն:
Ես էղա Հուրի-Մալաք, իլիքի մրջան, սը՛ն:
Էլանք էտ պառավու տուն կաշխատենք, իլիքի մրջան, սը՛ն:
Ետ պառավ ըսեց. - Ետ վո՞վ է զիմ տուն կենա, իլիքի մրջան, սը՛ն:
Պառավ խլիսուն չգնաց թակավորի տուն, իլիքի մրջան, սը՛ն:
Պառավ ընծի բռնեց, իլիքի մրջան, սը՛ն:
Ես իմ տաշղենին հանի, թալի, իլիքի մրջան, սը՛ն:
Պառավ տաշղենին թալեց թոնիր, իլիքի մրջան, սը՛ն:
Ես տեսա ծեն էկավ, իլիքի մրջան, սը՛ն:
- Մարե, էլի տե, էն ի՞նչ ծեն է կիզա, իլիքի մրջան, սը՛ն:

Իմ մամ էլավ, իշեց, իլիքի մրջան, սը՛ն:

Ըսավ. - Պարապ բաներուց դավի չունիս, իլիքի մրջան, սը՛ն:

Ըսավ. - Թակավորի իլիսեքն է, կը ցովին, իլիքի մրջան, սը՛ն:

Էլա, ընի. - Մամ, ծի մի ուզի, իլիքի մրջան, սը՛ն:

Էլավ թակավորի տղեն թառի տկի ծոտոտ բերգիր տվեց, իլիքի մրջան, սը՛ն:

Թառի տկի բերգիր քաշին, բերին, իլիքի մրջան, սը՛ն:

Իրիկուն ձեռներս ի կը լվի, տի, իլիքի մրջան, սը՛ն:

Ըսավ. - Թակավորի ծիանքն է, կը ժողվին, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղի ծիուն սովորցուցի, իլիքի մրջան, սը՛ն:

Քու տեր բերախտ ա, խո դու բերախտ չե՞ս, իլիքի մրջան, սը՛ն:

Ըսավ. - Ձին ըսավ՝ զիմ տեր կուզիմ, զիմ տիրոջ, իլիքի մրջան, սը՛ն:

Ըսեց. - Սևավոր, հըլու մը շարեք, իմ տղին հըլու պետք չէ: Էլաք գացեք:

Թակավորի տղեն էլավ էկավ ըսեց՝ ծի, էլի վե, հագանե: Ըսեց. - Ձիմ տեր կուզեմ, զիմ տիրոջ, իլիքի մրջան, սը՛ն:

Տերն ես եմ, տիրոջ՝ պառավ, դուն ես, իլիքի մրջան, սը՛ն:

Ձծին գտեր կուզե, տիրոջ պառավն էկավ, չէլավ, իլիքի մրջան, սը՛ն:

Կավագներ ըսին. - Պառավ, վոն է քու տուն ծին տիրեր, իլիքի մրջան, սը՛ն:

Չուրի-Մալաք էկավ, իլիքի մրջան, սը՛ն:

Ձին էլավ. կայնավ, ըսավ. - Դա, դա, քու տեր բերախտ է, դու բերախտ չես, իլիքի մրջան, սը՛ն:

Թակավորի տղեն ընծի տեսավ, իլիքի մրջան, սը՛ն:

Էլավ, առավ ընծի, քնաց իլիքի մրջան, սը՛ն:

Իրեք խարիր ուռուս-մուռուս, իլիքի մրջան, սը՛ն:

Չորս խարիր խատ սիվտակ մուրուս, իլիքի մրջան, սը՛ն:

Նոր էրի Չուրի-Մալաք դուս, իլիքի մրջան, սը՛ն:

Էրկու ծի թակավորի տղեն քաշեց դուս, իլիքի մրջան, սը՛ն:

Մեկ Բոշի-Բոռոշին, մեկ ուր մամուն, իլիքի մրջան, սը՛ն:

Ամեկ ծիու պոչ մեկ կապեց, իլիքի մրջան, սը՛ն:

Քառսուն տարի ծիան պահեր եմ, իլիքի մրջան, սը՛ն:

Քառսուն տարի էլ կը պահեմ, իլիքի մրջան, սը՛ն:

Չիրկուն ծամեր տուն բերես, իլիքի մրջան, սը՛ն:

Էն խասավ ուր մուրագին, դուն էլ՝ քոն: